ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 473 – Ա **01 հուլիսի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի N 1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650 - Լ որոշումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2019 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2019 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 1-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2019 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:».

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2019 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

01.07.2019

ՄԱՐԶՊԵՏԻՆ
Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՒՄ՝ Подписано: GRIGORYAN NAREK 1610910273

ք. Գավառ